«ՌՈՍԳՈՍՍՏՐԱԽ-ԱՐՄԵՆԻԱ» ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐԱԿԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

«ՌՈՍԳՈՍՍՏՐԱԽ-ԱՐՄԵՆԻԱ» ԱՓԲԸ
Խորհրդի կողմից
31.01.2019 թ. Խորհրդի նիստի թիվ 01
արձանագրություն

Խորհրդի նախագահ՝ _____ Դ.Է. Խաչատուրով

ՀԻՓՈԹԵՔԱՅԻՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ

Փաստաթղթի կոդ	Խմբագրություն
TC750-04-07	02

Փաստաթուղթը խմբագրեց	Ստորաբաժանման անվանումը	Նոր պրոդուկտների մշակման բաժին	
	Ղեկավար	Գոհար Հակոբյան	
Համաձայնեցվեց	Գործադիր տնօրեն	Գագիկ Գրիգորյան	
	Ներքին աուդիտի ղեկավար	Լիանա Բաբաջանյան	
	Մեթոդոլոգիայի և զարգացման գծով գործադիր տնօրենի տեղակալ	Վահագն Աղավելյան	
	Իրավաբանական դեպարտամենտի ղեկավար	Նարինե Խաչատրյան	
	Որակի կառավարման բաժնի ղեկավար	Մաքրուհի Բալաբանյան	

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ, ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՍՈՒԲՅԵԿՏՆԵՐ
2. ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՕԲՅԵԿՏ
3. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՌԻՍԿԵՐ, ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՊԱՏԱՀԱՐՆԵՐ
4. ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅՈՒՆԻՑ ԲԱՑԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐ
5. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԳՈՒՄԱՐԸ
6. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՍԱԿԱԳԻՆԸ, ԱՊԱՀՈՎԱԳՐԱՎՃԱՐԸ
7. ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ
8. ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿՆՔՄԱՆ ԿԱՐԳԸ
9. ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԴԱԴԱՐԵՑՈՒՄԸ
10. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
11. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՀԱՏՈՒՑՄԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ
12. ՎԵՃԵՐԻ ԼՈՒԾՄԱՆԿԱՐԳԸ

Սույն Հիփոթեքային պարտավորության ապահովագրության պայմանները (այսուհետ՝ Պայմաններ) մշակված են համաձայն ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի, «Ապահովագրության և ապահովագրական գործունեության» մասին ՀՀ օրենքի և համապատասխանում են ՀՀ ԿԲ կողմից տրված ԱՊՈ թիվ 0009 Լիցենզիայի Ֆինանսական վնասների ապահովագրություն դասին:

Պայմանները հանդիսանում են Պայմանների համաձայն կնքված Ապահովագրության պայմանագրերի անբաժանելի մասը:

Պայմանների հիման վրա կարող են մշակվել հավելվածներ և/կամ ապահովագրական ծրագրեր/պրոդուկտներ (այսուհետ՝ Ծրագիր), որոնք կհանդիսանան Պայմանների անբաժանելի մասը:

Ապահովագրողը հավաստում է, որ Ֆինանսական համակարգի հաշտարարի որոշումները վիճարկելու իրավունքից հրաժարվելու վերաբերյալ համաձայնագիր չի կնքել:

Պայմանների հայերեն և ռուսերեն տեքստերում հակասություններ առաջանալու դեպքում գերակայում է հայերեն տարբերակը:

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ, ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՍՈՒԲՅԵԿՏՆԵՐ

1.1. ՀՀ օրենսդրության համաձայն սույն Պայմանները կարգավորում են այն հարաբերությունները, որոնք առաջանում են «ՌՈՍԳՈՍՍՏՐԱԽ-ԱՐՄԵՆԻԱ» ապահովագրական ՓԲԸ-ի, այսուհետ՝ «Ապահովագրող», մի կողմից, և գործունակ ֆիզիկական կամ գործող իրավաբանական անձի միջև, այսուհետ՝ «Ապահովադիր», մյուս կողմից, որը սույն Պայմանների հիման վրա Ապահովագրողի հետ կնքել է Շահառուի հետ կնքված վարկային պայմանագրով (այսուհետ՝ Վարկային պայմանագիր) սահմանված վարկառուի (այսուհետ՝ Վարկառու) վարկի մայր գումարի մասով հիփոթեքային պարտավորության մի մասի ապահովագրության պայմանագիր (այսուհետ՝ Ապահովագրության պայմանագիր):

1.2. Սույն Պայմանների համաձայն կնքված Ապահովագրության պայմանագրով ապահովագրական հատուցում ստանալու համար Շահառու է հանդիսանում վարկատուն/գրավառուն (այսուհետ՝ Շահառու):

1.3. Վարկային պայմանագրով պահանջի իրավունքի անցման (գրավի նկատմամբ իրավունքների փոխանցման) դեպքում Ապահովադիրն փոխարինում է Շահառուին Վարկային պայմանագրով պահանջի իրավունքը կրող նոր անձով, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի կամ եթե Շահառուն Ապահովագրության պայմանագրով կատարել է որևէ պարտականություն կամ Ապահովագրողին պահանջ է ներկայացրել ապահովագրական հատուցում ստանալու համար:

Ապահովագրության պայմանագրով կարող է սահմանվել Շահառուի փոխարինման այլ կարգ, եթե դա չի հակասում ՀՀ գործող օրենսդրությանը:

1.4. Սույն Պայմանների իմաստով կիրառվում են հետևյալ տերմիններն ու սահմանումները.

1.4.1. Հիփոթեքի պայմանագիր՝ գրավոր ձևով կնքվող փաստաթուղթ, որով մի կողմը՝ գրավառուն (Շահառուն), որը հիփոթեքով ապահովված Վարկային պայմանագրով կամ այլ պարտավորությամբ (հիմնական պարտավորությամբ) պարտատերն է, այդ պարտավորությամբ գրավ դրված գույքի արժեքից գրավատուի (Վարկառուի) մյուս պարտատերերի հանդեպ իր դրամական պահանջները բավարարելու նախապատվության իրավունք ունի:

1.4.2. Հիփոթեքի առարկա՝ կառուցված կամ կառուցվող բնակելի տարածք, որի նկատմամբ սեփականության կամ գնելու իրավունքը գրանցված է անշարժ գույքի նկատմամբ իրավունքների և դրա հետ կապված գործարքների պետական գրանցման համար սահմանված կարգով, և որը Հիփոթեքի պայմանագրով գրավադրվում է կամ որի գրավադրման անհրաժեշտությունն առաջանում է ՀՀ օրենսդրության հիման վրա Հիփոթեքի պայմանագրում նշված հանգամանքների ի հայտ գալու դեպքում, և որը ապահովում է Վարկային պայմանագրով պարտավորությունների կատարումը:

1.4.3. Հիփոթեքի առարկայի կորուստ՝ ինչպես Հիփոթեքի առարկայի ոչնչացում, այնպես էլ այն տնօրինող անձից դրա հափշտակում, թեև հնարավոր է, որ առարկան լինի ֆիզիկապես անվնաս վիճակում:

1.4.4. Բնակելի տարածք՝ մեկուսացված (այսինքն այլ տարածքներից, այդ թվում՝ և ոչ բնակելի, առանձնացված) տարածք, որը հանդիսանում է անշարժ գույք և պիտանի է քաղաքացիների մշտական բնակության համար (համապատասխանում է սահմանված սանիտարական և

տեխնիկական պայմաններին ու նորմերին և ՀՀ օրենսդրության համաձայն սահմանված այլ պահանջներին): Սույն Պայմանների շրջանակներում որպես Բնակելի տարածքի տեսակ դիտարկվում են հետևյալ օբյեկտները.

– Բնակելի տուն՝ շինարարությամբ ավարտված անհատապես որոշված շինություն, որը բաղկացած է սենյակներից և օժանդակ օգտագործման տարածքներից, որոնք նախատեսված են այդ շինության մեջ մշտական բնակության նպատակով քաղաքացիների կենցաղային և այլ կարիքների բավարարման համար, և որը տեղակայված է օգտագործման համար համապատասխան թույլատվություն ունեցող հողատարածքում:

– Բնակարան՝ բազմաբնակարանային շենքում կառուցվածքայնորեն առանձնացված տարածք, որն ուղղակի հասանելիություն է ապահովում այդ շենքի մեջ ընդհանուր օգտագործման տարածքներին և բաղկացած է մեկ կամ մի քանի սենյակներից, ինչպես նաև օժանդակ օգտագործման տարածքներից, որոնք նախատեսված են այդ տեսակ առանձնացված շինության մեջ մշտական բնակության նպատակով քաղաքացիների կենցաղային և այլ կարիքների բավարարման համար:

1.4.5. Դեֆոլթ՝ Վարկառուի կողմից վարկի վերադարձման և հաշվեգրված տոկոսների վճարման մասով Վարկային պայմանագրի պայմանները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու փաստ, ինչը հիմք է հանդիսացել Հիփոթեքի առարկայի նկատմամբ բռնագանձման տարածման համար:

Սույն Պայմանների իմաստով դեֆոլտի ճանաչման ամսաթիվ է համարվում Հիփոթեքի առարկայի նկատմամբ բռնագանձման տարածման համար հիմք հանդիսացած՝ Վարկառուի կողմից վարկի վերադարձման և հաշվեգրված տոկոսների վճարման մասով Վարկային պայմանագիրը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու 91 (իննսունմեկերրորդ) օրը, եթե Ապահովագրության պայմանագրով այլ բան սահմանված չէ:

1.4.6. Մայր գումարի մնացորդ՝ Վարկային պայմանագրով Վարկառուի պարտքը Շահառուի նկատմամբ՝ առանց հաշվի առնելու վարկի օգտագործման համար տոկոսները, ինչպես նաև առանց հաշվի առնելու տուժանքները (տուգանքները, տույժերը), ինչպես նաև այլ ծախսերն ու ծախքերը, որոնց վճարը կարող է պայմանավորված լինել Հիփոթեքային պայմանագրով:

1.4.7. Հիփոթեքի առարկայի իրացում՝ Հիփոթեքի այնպիսի առարկայի իրացում, որի նկատմամբ բռնագանձում է տարածվել ՀՀ օրենսդրության համաձայն, հրապարակային սակարկություններում վաճառքի միջոցով: Հիփոթեքի պայմանագրով գրավադրված գույքի վաճառքի մասով հրապարակային սակարկություններում վաճառքի իրականացման կարգը սահմանվում է ՀՀ օրենսդրությամբ:

Սույն Պայմանների շրջանակներում Հիփոթեքի առարկայի իրացում է համարվում նաև Շահառուի (վարկատուի/գրավառուի) կողմից Հիփոթեքի առարկայի ձեռքբերումը (ի սեփականություն վերցնել) ՀՀ գործող օրենսդրության համաձայն:

Սույն Պայմանների շրջանակներում Հիփոթեքի առարկայի իրացում կարող է համարվել գրավառուի (Շահառուի) և Ապահովագրողի համաձայնությամբ Հիփոթեքի առարկայի վաճառքը գրավատուի (Վարկառուի) կողմից ներկայացված գնորդին: Հիփոթեքի առարկայի իրացման նպատակով գրավատուի (Վարկառուի) կողմից գնորդ ներկայացնելու դեպքում Ապահովագրողի համաձայնությունը հաստատվում է Ապահովագրողի, Վարկառուի և Շահառուի միջև եռակողմ համաձայնության ստորագրմամբ: Եռակողմ համաձայնությունը

ստորագրվում է նախքան Հիփոթեքի առարկայի օտարման գործարքի իրականացումը:
1.4.8. Վերոնշյալ հասկացությունները կիրառվում են սույն Պայմանների նպատակներով այն իմաստով, որը դրանց համար սահմանվել է: Եթե որևէ տերմինի կամ հասկացության նշանակությունը չի սահմանվել Պայմաններում, այն մեկնաբանվում է ՀՀ օրենսդրության և նորմատիվ ակտերի կամ սովորաբար ընդունված լեզվաբանական նշանակության համաձայն:
1.5. Ապահովագրության պայմանագիրը չի համարվում ուժի մեջ մտած, եթե Հիփոթեքի պայմանագրով Հիփոթեքի առարկա է հանդիսանում շահագործումից հանված անշարժ գույքը, գույքը, որի նկատմամբ ՀՀ գործող օրենսդրության համաձայն չի կարող բռնագանձում տարածվել, ինչպես նաև գույքը, որի նկատմամբ ՀՀ գործող օրենսդրությամբ սահմանված կարգով սեփականաշնորհումն արգելված է:
1.6. Սույն Պայմանների հիման վրա կնքված Ապահովագրության պայմանագրով Ապահովագրողը պարտավորվում է Ապահովագրության պայմանագրով սահմանված վճարի (ապահովագրավճարի) դիմաց Ապահովագրության պայմանագրով նախատեսված ապահովագրական պատահարի տեղի ունենալու դեպքում հատուցել Շահառուին այդ պատահարի արդյունքում պատճառված վնասները Ապահովագրության պայմանագրով սահմանված ապահովագրական գումարի սահմաններում ապահովագրական հատուցում վճարելու միջոցով:
1.7. Սույն Պայմանների հիման վրա կնքված Ապահովագրության պայմանագիրը պետք է համապատասխանի ՀՀ օրենսդրությամբ նախատեսված՝ գործարքի վավերականության ընդհանուր պահանջներին: Ապահովագրության պայմանագրի կատարման ժամանակ կողմերը ղեկավարվում են ՀՀ գործող օրենսդրությամբ, սույն Պայմաններով և Ապահովագրության պայմանագրի դրույթներով:
1.8. Սույն Պայմանները կիրառվում են, եթե հիփոթեքի օբյեկտի առուվաճառքի պայմանագրով վճարմանն ուղղված՝ Վարկառուի սեփական միջոցների չափը Ապահովագրության պայմանագրով սահմանված կարգով որոշված՝ Հիփոթեքի առարկայի շուկայական արժեքի 10%-ից պակաս չէ, եթե այլ բան սահմանված չէ Ապահովագրության պայմանագրով:
1.9. Ապահովագրության պայմանագիրը կնքելիս Ապահովադիրը (Ապահովադրի համաձայնությամբ՝ Շահառուն) և Ապահովագրողը կարող են պայմանավորվել Պայմանների առանձին դրույթների փոփոխման կամ բացառման վերաբերյալ: Նման փոփոխությունները չեն կարող հակասել ՀՀ օրենսդրությանը:

2. ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՕԲՅԵԿՏ

2.1. Ապահովագրության օբյեկտ են հանդիսանում ՀՀ գործող օրենսդրությանը չհակասող՝ Ապահովադրի (Շահառուի) գույքային շահերը՝ կապված Վարկառուի և Շահառուի միջև կնքված վարկային պայմանագրով Վարկառուի՝ Շահառուի հանդեպ վարկի մայր գումարի մասով ունեցած պարտավորության մի մասը մարելու հետ:

3. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՌԻՍԿԵՐ, ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՊԱՏԱՀԱՐՆԵՐ

3.1. Ապահովագրական ռիսկ է հանդիսանում ենթադրվող իրադարձությունը, որի տեղի

ունենալու դեպքի համար կնքվում է Ապահովագրության պայմանագիրը: Որպես ապահովագրական ռիսկ դիտարկվող իրադարձությունը պետք է ունենա տեղի ունենալու հավանական և պատահական բնույթ:

3.2. Ապահովագրական պատահարն Ապահովագրության պայմանագրով նախատեսված իրադարձությունն է, որի տեղի ունենալու դեպքում առաջանում է Ապահովադրին (Շահառուին) ապահովագրական հատուցում վճարելու Ապահովագրողի պարտականությունը:

3.3. Սույն Պայմանների հիման վրա կնքված Ապահովագրության պայմանագրով ապահովագրական պատահար է համարվում Ապահովադրի (Շահառուի) կողմից Ապահովագրողին ապահովագրական հատուցում ստանալու նպատակով դիմելը, եթե բավարարված են հետևյալ բոլոր հաջորդական պայմանները.

3.3.1. ապահովագրական գումարի և մինչև ապահովագրական պատահարի նշաններ ունեցող իրադարձության տեղի ունենալու պահը Վարկային պայմանագրով Վարկառուի կողմից վարկի մայր գումարի գծով իրականացված մարումների տարբերությունը դրական մեծություն է,

3.3.2. Վարկառուի կողմից չեն կատարվել Վարկառուի և Շահառուի միջև կնքված Վարկային պայմանագրի համաձայն Շահառուի հանդեպ ստանձնած պարտավորությունները,

3.3.3. Հիփոթեքի առարկայի՝ ՀՀ օրենսդրությամբ նախատեսված կարգով բռնագանձման և իրացման արդյունքում գոյացած միջոցների հաշվին ամբողջական չեն կատարվել Վարկառուի՝ Վարկային պայմանագրով Շահառուի հանդեպ վարկի մայր գումարի մասով ունեցած պարտավորությունները:

3.4. Ապահովագրական պատահարի տեղի ունենալու ամսաթիվ է հանդիսանում սույն Պայմանների 3.3. կետով նախատեսված պայմանների բավարարման դեպքում Ապահովադրի (Շահառուի) կողմից Ապահովագրողին դիմելու ամսաթիվը:

4. ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅՈՒՆԻՑ ԲԱՑԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐ

4.1. Եթե Ապահովագրության պայմանագրով այլ բան նախատեսված չէ, սույն Պայմանների 3.3. կետում նշված իրադարձությունը չի հանդիսանում ապահովագրական պատահար, եթե այն տեղի է ունեցել հետևյալի արդյունքում.

4.1.1. ապահովագրական պատահարի տեղի ունենալուն ուղղված՝ Ապահովադրի (Վարկառուի) կամ Շահառուի (նրա աշխատողների), ինչպես նաև նրանց հրահանգով գործող անձանց հակաօրինական կանխամտածված գործողությունների (անգործության),

4.1.2. պետական մարմինների, տեղական ինքնակառավարման մարմինների կամ այդ մարմինների պաշտոնատար անձանց անօրինական գործողությունների, այդ թվում՝ նշված մարմինների և պաշտոնատար անձանց կողմից օրենքներին կամ այլ իրավական ակտերին չհամապատասխանող ակտերի ընդունման,

4.1.3. Դժբախտ պատահարի պատճառով Վարկառուի մահվան կամ աշխատունակության կորստի,

4.1.4. պետական մարմինների կարգադրությամբ Հիփոթեքի առարկայի առգրավման, բռնագրավման, ռեկվիզիցիայի, կալանքի, վնասման կամ ոչնչացման, կամ այլ նմանատիպ

գործողության,

4.1.5. Վարկառուի և Շահառուի միջև կնքված պայմանագիրը (պայմանագրերը) դատարանի կողմից անվավեր ճանաչելու,

4.1.6. Հիփոթեքի առարկայի կորստի և/կամ վնասման,

4.1.7. Հիփոթեքի առարկայի նկատմամբ Վարկառուի սեփականության իրավունքի կորստի և/կամ սահմանափակման, բացառությամբ ի օգուտ Շահառուի Հիփոթեքի առարկայի բռնագանձման,

4.1.8. ահաբեկչական ակտի և(կամ) դրա հետևանքների,

4.1.9. Ապահովադրի (Վարկառուի) և Շահառուի (նրա աշխատողների) միջև միտումնավոր ապօրինի համաձայնության,

4.1.10. Ապահովադրի (Վարկառուի) կողմից Ապահովագրողի հետ համաձայնեցված ժամկետում ռիսկի աստիճանը նկատելիորեն մեծացնող հանգամանքները չվերացնելու, որոնց վերացման անհրաժեշտությունը նշել էր Ապահովագրողը Ապահովադրին (Վարկառուին, Շահառուին) գրավոր ծանուցում ուղարկելու միջոցով, ինչը հանգեցրել է Ապահովագրողին ապահովագրական հատուցման պահանջի ներկայացմանը, եթե Ապահովագրության պայմանագրով այլ բան նախատեսված չէ:

4.1.11. ՀՀ տնտեսության անկման և/կամ ճգնաժամի[1]:

4.2. Ապահովագրողն ազատվում է ապահովագրական հատուցում կատարելու պարտականությունից, եթե ապահովագրական պատահարի նշաններ ունեցող իրադարձությունը տեղի է ունեցել Ապահովագրության պայմանագրի գործողության սկզբից մինչև Հիփոթեքի առարկայի իրացումն ընկած ժամանակահատվածում տեղի ունեցած հետևյալ իրադարձությունների հետևանքով.

4.2.1. միջուկային պայթյունի, ճառագայթման, ռադիոակտիվ վարակի,

---

[1] հաշվետու եռամսյակի* ՀՆԱ-ն իրական արտահայտությամբ նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի նկատմամբ նվազել է 15 և ավելի տոկոսով և/կամ ՀՀ բանկային համակարգի չաշխատող վարկերի և ընդհանուր վարկերի հարաբերությունը հաշվետու ամսվա** վերջի դրությամբ կազմել է 15 և ավելի տոկոսով և/կամ ՀՀ դրամն ԱՄՆ դոլարի և/կամ Եվրոյի նկատմամբ գրավադրված գույքի իրացման օրվան նախորդող 30 օրերի ընթացքում միջինում*** արժեզրկվել է 20 և ավելի տոկոսով և/կամ ՀՀ առևտրային բանկերի ավանդները հաշվետու ամսվա ընթացքում նվազել են 7 և ավելի տոկոսով և/կամ ՀՀ Կենտրոնական բանկը գրավադրված գույքի իրացման օրվան նախորդող 30 օրերի ընթացքում պաշտոնապես տարածել է հայտարարություն ավանդների փաստացի նվազման և/կամ բնակչության կողմից ավանդները բանկերից դուրս բերելու մասսայական փորձ կատարելու, ինչպես նաև ֆինանսատնտեսական համակարգի անկայունությունը վկայող այլ հանգամանքների մասին:

Այն դեպքերում, երբ վերոնշյալ ցուցանիշները դեռևս հրապարակված չեն համապատասխան մարմինների կողմից և Ապահովագրողը հատուցումն իրականացրել է առանց պաշտոնական հրապարակումների արդյունքների և դրանց հրապարակումից հետո առաջացել է ապահովագրական հատուցման վճարումը նվազեցնելու կամ մերժելու հիմք, Ապահովագրողն իրավունք ունի Շահառուին արդեն իսկ վճարված գումարը (ամբողջությամբ կամ մասամբ) հետ պահանջել:

*հաշվետու եռամսյակ՝ գրավադրված գույքի իրացման եռամսյակին նախորդող եռամսյակ,

**հաշվետու ամիս՝ գրավադրված գույքի իրացման ամսվան նախորդող ամիս,

*** միջինը հաշվարկվում է հետևյալ բանաձևով $Y = \frac{\sum_{t(} x_t - x_{t-1})/x_{t-1}}{t-1}$, որտեղ

Y-ը միջին արժեզրկումն է,

x_t – ն ԿԲ-ի կողմից հրապարակված փոխարժեքն է դիտարկվող ժամանակահատվածի t-րդ աշխատանքային օրվա դրությամբ,

t-ն աշխատանքային օրերի քանակն է դիտարկվող ժամանակահատվածում:

4.2.2. ռազմական գործողությունների, պատերազմի, քաղաքացիական պատերազմի, ինչպես նաև ահաբեկչական գործողությունների, որոնք հանգեցրել են Հիփոթեքի առարկայի տեղակայման վայրից և հարակից տարածքներից բնակչության ժամանակավոր կամ մշտական բնույթ կրող մասսայական տարհանման, բնակիչների կողմից իրենց բնակավայրի կամավոր լքման, ինչպես նաև բնակչության շարժին և վարքագծին վերաբերող այնպիսի այլ փոփոխությունների, որոնք ակնհայտորեն բնորոշ չեն Հիփոթեքի առարկայի տեղակայման վայրին և հարակից տարածքներին,
4.2.3. ՀՀ անշարժ գույքի շուկայում գների 40 և ավելի տոկոս անկման՝ արձանագրված անշարժ գույքի՝ առնվազն 2 տարբեր անկախ գնահատողների կողմից:
4.3. Ապահովագրողը չի հատուցում այն վնասները, որոնք կապ չունեն հիփոթեքով և ինքնին Հիփոթեքի պայմանագրով ապահովված պարտավորության հետ:
4.4. Սույն ապահովագրությունը չի ծածկում այն կորուստը/ոչնչացումը և/կամ վնասը, որն ուղղակիորեն կամ անուղղակիորեն պատճառվել է որևէ անձի կողմից ձեռնարկված գործողության արդյունքում, որը գործում է դե յուրե կամ դե ֆակտո իշխանության բռնազավթման գործողություններ կատարող կամ դրան նպաստող ահաբեկչություն կամ բռնություն նախաձեռնած կազմակերպության անունից կամ նրա հետ միասին:
4.5. Ապահովագրության պայմանագրով կարող են նաև նախատեսված լինել ապահովագրությունից այլ բացառություններ:

5. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԳՈՒՄԱՐ

5.1. Ապահովագրական գումար՝ դրամական գումար, որի սահմաններում Ապահովագրողը պարտավորվում է իրականացնել ապահովագրական հատուցում ապահովագրական պատահարի տեղի ունենալու դեպքում սույն Պայմաններով և Ապահովագրության պայմանագրով նախատեսված կարգով:
5.2. Ապահովագրական գումարը սահմանվում է Ապահովագրության պայմանագրում կողմերի համաձայնությամբ ՀՀ օրենսդրության նորմերին և սույն Պայմաններին համապատասխան:

6. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՍԱԿԱԳԻՆ, ԱՊԱՀՈՎԱԳՐԱՎՃԱՐ

6.1. Ապահովագրական սակագինն ապահովագրավճարի դրույքաչափն է ապահովագրական գումարի միավորից և հաշվի է առնում ապահովագության օբյեկտը և ապահովագրական ռիսկի բնույթը: Ապահովագրական սակագինն արտահայտվում է ապահովագրական գումարի նկատմամբ տոկոսներով:
6.2. Ապահովագրական սակագնի կոնկրետ չափը սահմանվում է Ապահովագրության պայմանագրով Ապահովագրողի կողմից՝ ելնելով ապահովագրության համաձայնեցված պայմանների գծով պարտականությունների ծավալից, ապահովագրության ժամկետից, ապահովագրավճարի վճարման կարգից, ապահովագրության օբյեկտի տեսակից և այլ գործոններից, որոնք ազդում են ապահովագրական ռիսկի աստիճանի վրա:
6.3. Ապահովագրավճարը դրամական գումար է, որն Ապահովադիրը պարտավորվում է հնարավոր ապահովագրական հատուցման դիմաց վճարել Ապահովագրողին

Ապահովագրության պայմանագրով սահմանված կարգով և ժամկետներում: Ապահովագրավճարը հաշվարկում է Ապահովագրողը ապահովագրության ամբողջ ժամկետի համար՝ ելնելով Ապահովագրության պայմանագրով նախատեսված ապահովագրական գումարից և ապահովագրական սակագնի չափից:

6.4. Ապահովագրության պայմանագրով ապահովագրավճարը վճարվում է միանվագ, եթե Ապահովագրության պայմանագրով այլ բան նախատեսված չէ: Ապահովագրավճարի վճարման ամսաթիվ է համարվում Ապահովագրողի դրամարկղ կամ Ապահովագրողի իրավասու ներկայացուցչին ապահովագրավճարի վճարման օրը կամ ապահովագրավճարի՝ Ապահովագրողի հաշվարկային հաշվին մուտք լինելու օրը:

6.5. Ապահովագրավճարը վճարվում է.

6.5.1. անկանխիկ վճարման դեպքում՝ Ապահովագրողի հաշվարկային հաշվին փոխանցում կատարելով Ապահովագրության պայմանագրի կնքման օրվանից 5 աշխատանքային օրվա ընթացքում, եթե Ապահովագրության պայմանագրով այլ բան նախատեսված չէ,

6.5.2. կանխիկ դրամով՝ Ապահովագրողի դրամարկղ կամ Ապահովագրողի իրավասու ներկայացուցչին Ապահովագրության պայմանագիրը կնքելիս, եթե Ապահովագրության պայմանագրով այլ բան նախատեսված չէ:

6.6. ՀՀ դրամին համարժեք արտարժույթով ապահովագրության դեպքում ապահովագրավճարը վճարվում է ՀՀ դրամով, եթե Ապահովագրության պայմանագրով այլ բան նախատեսված չէ՝ Ապահովագրության պայմանագիրը կնքելու օրվա դրությամբ ՀՀ կենտրոնական բանկի կողմից հրապարակված փոխարժեքով:

6.7. Ապահովագրության պայմանագրով սահմանված ժամկետում և չափով Ապահովադրի կողմից ապահովագրավճարը (ապահովագրավճարի հերթական մասը) չվճարելու դեպքում Ապահովագրողն իրավունք ունի չսահմանել լրացուցիչ ժամկետ ապահովագրավճարի վճարման համար և չծանուցել այդ մասին Ապահովադրին: Ապահովագրավճարի վճարման համար լրացուցիչ ժամկետ չսահմանելու և այդ մասին Ապահովադրին չծանուցելու դեպքում Ապահովագրողն իրավունք ունի չվճարել Ապահովագրության պայմանագրով սահմանված ապահովագրավճարի հերթական մասի վճարման ամսաթիվ հանդիսացող օրվան հաջորդող օրվա ժամը 00:00-ից հետո տեղի ունեցած իրադարձությունների հետևանքով առաջացած վնասների դիմաց ապահովագրական հատուցումներ:

7. ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ

7.1. Ապահովագրության Պայմանագրի գործողության ժամկետը սահմանվում է կողմերի համաձայնությամբ:

7.2. Ապահովագրության պայմանագիրն ուժի մեջ է մտնում կնքման պահից, եթե Ապահովագրության պայմանագրով այլ բան նախատեսված չէ:

7.3. Ապահովագրության պայմանագրով սահմանված ապահովագրությունը տարածվում է Ապահովագրության պայմանագրի ուժի մեջ մտնելուց հետո տեղի ունեցած ապահովագրական պատահարների վրա:

7.4. Ապահովագրության պայմանագրի գործողությունն ավարտվում է Ապահովագրության պայմանագրում որպես ավարտի ամսաթիվ նշված օրվա ժամը 23:59-ին: Պայմանագրի

գործողության ժամկետը ցանկացած դեպքում վաղաժամկետ դադարում է ապահովագրական գումարի և Վարկային պայմանագրով Ապահովադրի կողմից վարկի մայր գումարի գծով իրականացված մարումների գումարային մեծության տարբերությունը զրոյի հավասարվելու պահից:

8. ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿՆՔՄԱՆ ԿԱՐԳԸ

8.1. Ապահովագրության պայմանագիրը կնքելու համար Ապահովադիրն Ապահովագրողին է ներկայացնում սահմանված ձևի գրավոր դիմում, եթե Ապահովագրության պայմանագրով այլ բան նախատեսված չէ: Միևնույն ժամանակ դիմումի հետ միասին Ապահովագրողը կարող է պահանջել Ապահովադրից հետևյալ փաստաթղթերն ու տեղեկությունները.
8.1.1. Ապահովադրի անձնագրային տվյալները,
8.1.2. Վարկառուի աշխատանքային գործունեության և եկամուտների վերաբերյալ տվյալներ,
8.1.3. Հիփոթեքով ապահովված՝ Ապահովագրված անձի պարտավորությունները սահմանող փաստաթղթերի պատճեններ (Վարկային պայմանագիր),
8.1.4. Անշարժ գույքի նկատմամբ իրավունքների միասնական պետական գրանցամատյանում Հիփոթեքի առարկայի նկատմամբ սեփականության կամ գնելու իրավունքի և գրավի իրավունքի գրանցումը հավաստող փաստաթղթեր,
8.1.5. Հիփոթեքի առարկայի գնահատման վերաբերյալ հաշվետվություն,
8.1.6. Ապահովադրին հայտնի բոլոր այնպիսի հանգամանքների վերաբերյալ տեղեկատվություն, որոնք կարող են էական նշանակություն ունենալ ռիսկի աստիճանը գնահատելիս,
8.1.7. Ապահովագրողի պահանջով այլ փաստաթղթեր և տեղեկություններ:
8.2. Ապահովագրության պայմանագիրը կնքելիս Ապահովադիրը (Վարկառուն) պարտավոր է Ապահովագրողին հայտնել ապահովագրական պատահարի տեղի ունենալու հավանականության և դրա տեղի ունենալու արդյունքում հնարավոր վնասի չափը որոշելու համար էական նշանակություն ունեցող իրեն հայտնի հանգամանքների մասին: Ընդ որում էական են համարվում, ի մասնավորի, այն հանգամանքները, որոնք որոշակիորեն սահմանված են Ապահովագրողի կողմից Ապահովագրության պայմանագրում և/կամ Ապահովագրողի գրավոր հարցման մեջ և/կամ ապահովագրության դիմումի ձևում:
8.3. Ապահովագրողն իրավունք ունի պահանջելու անվավեր ճանաչել Ապահովագրության պայմանագիրը, եթե Ապահովագրության պայմանագիրը կնքելուց հետո պարզվի, որ Ապահովադիրը ակնհայտ սուտ տեղեկություններ է տրամադրել այն հանգամանքների վերաբերյալ, որոնք էական նշանակություն ունեն ապահովագրական պատահարի տեղի ունենալու հավանականության և դրա հետևանքով հավանական վնասի չափի (ապահովագրական ռիսկի) որոշման համար և/կամ որոնց գծով Ապահովագրողը հարցում է կատարել ապահովագրության դիմումի ձևում և/կամ այլ գրավոր հարցման մեջ և/կամ որոնք սահմանված են Ապահովագրության պայմանագրում:
Ապահովագրողը չի կարող պահանջել անվավեր ճանաչել Ապահովագրության պայմանագիրը, եթե այն հանգամանքները, որոնց մասին հայտնել է Ապահովադիրը, արդեն դադարել են գոյություն ունենալ:

8.4. Ապահովագրության պայմանագիրը կնքելիս Ապահովագրողն իրավունք ունի ծանոթանալու Հիփոթեքի առարկայի վիճակի հետ (փաստաթղթերով և զննման միջոցով), իսկ անհրաժեշտության դեպքում՝ կազմակերպելու համապատասխան փորձաքննություն:
8.5. Ապահովագրության պայմանագիրը կնքելիս Ապահովագրողն իրավունք ունի անհրաժեշտության դեպքում անցկացնելու Վարկառուի վճարունակության մակարդակի վերլուծություն (փորձաքննություն), ընդ որում Վարկառուն և գրավառուն պարտավոր են տրամադրել Ապահովագրողին այդպիսի հնարավորություն:
8.6. Ապահովագրության պայմանագիրը կնքվում է գրավոր ՀՀ գործող օրենսդրության պահանջներին համապատասխան:
8.7. Ապահովագրության պայմանագրի գրավոր ձևը չպահպանելը հանգեցնում է դրա անվավերությանը:
8.8. Ապահովագրության պայմանագիրը կազմվում է յուրաքանչյուր կողմին անհրաժեշտ օրինակների քանակով, այդ թվում՝ Շահառուի համար: Ընդ որում, բոլոր օրինակներն ունեն հավասար իրավական ուժ:
8.9. Սույն Պայմաններում առկա և Ապահովագրության պայմանագրի տեքստում չներառված դրույթները պարտադիր են Ապահովադրի համար, եթե Ապահովագրության պայմանագրում ուղղակիորեն նշվում է սույն Պայմանների կիրառումը և Պայմաններն ինքնին կցված են դրան: Վերջին դեպքում Ապահովագրության պայմանագիրը կնքելիս Պայմանների տրամադրումն Ապահովադրին պետք է հաստատված լինի Ապահովագրության պայմանագրում կատարված գրառմամբ:
8.10. Ապահովագրության պայմանագրի ցանկացած փոփոխություն վավեր է միայն այն դեպքում, եթե այն չի հակասում ՀՀ գործող օրենսդրությանը և/կամ սույն Պայմաններին, ընդունված է կողմերի համաձայնությամբ, կազմված է գրավոր ձևով և վավերացված Ապահովագրողի ստորագրությամբ ու կնիքով և Ապահովադրի ստորագրությամբ:
8.11. Եթե Ապահովագրության պայմանագրի գործողության ընթացքում տեղի են ունեցել այն հանգամանքների էական փոփոխություններ, որոնցից ելնում էին կողմերը Ապահովագրության պայմանագիրը կնքելիս, ապա կողմերը կարող են ներառել Ապահովագրության պայմանագրի մեջ փոփոխություններ և լրացումներ՝ Ապահովագրության պայմանագրին կից լրացուցիչ համաձայնագիր կնքելով:
8.12. Ապահովագրության պայմանագրում Ապահովադիրը և Ապահովագրողը կարող են նախատեսել, որ Պայմանների առանձին դրույթներ չկիրառվեն կնքվող Ապահովագրության պայմանագրի շրջանակներում, չներառվեն Ապահովագրության պայմանագրի մեջ և/կամ չգործեն ապահովագրության որոշակի պայմաններում՝ պայմանով, որ այդպիսի բացառությունները, փոփոխությունները և լրացումները չեն հակասում ՀՀ գործող օրենսդրությանը:

9. ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԴԱԴԱՐԵՑՈՒՄ

9.1. Ապահովագրության պայմանագրի գործողությունը դադարում է հետևյալ դեպքերում՝
9.1.1. Ապահովագրության պայմանագրով Ապահովադրի (Շահառուի) նկատմամբ Ապահովագրողի կողմից պարտավորությունների լրիվ ծավալով կատարման,

9.1.2. եթե դրա ուժի մեջ մտնելուց հետո վերացել է ապահովագրական պատահարի վրա հասնելու հնարավորությունը, և ապահովագրական ռիսկի գոյությունը դադարել է ապահովագրական պատահարից տարբեր հանգամանքների բերումով,
9.1.3. Ապահովագրողի լուծարման կամ նրա լիցենզիայի դադարեցման,
9.1.4. Ֆիզիկական անձ Ապահովադրի մահվան կամ իրավաբանական անձ Ապահովադրի լուծարման,
9.1.5. ՀՀ օրենսդրությամբ կամ Ապահովագրության պայմանագրով նախատեսված այլ դեպքերում:
9.2. Ապահովագրության պայմանագիրը կարող է լուծվել հետևյալ դեպքերում.
9.2.1. Կողմերի համաձայնությամբ,
9.2.2. Ապահովադրի նախաձեռնությամբ,
9.2.3. Ապահովադրի կողմից Ապահովագրության պայմանագրի էական խախտման համար Ապահովագրողի նախաձեռնությամբ,
9.2.4. Ապահովագրողի կողմից Ապահովագրության պայմանագրի էական խախտման համար Ապահովադրի նախաձեռնությամբ,
9.2.5. Ապահովագրության պայմանագրով և ՀՀ օրենսդրությամբ նախատեսված այլ դեպքերում:
9.3. Ապահովագրության պայմանագիրը լուծելու մտադրության մասին կողմերը պարտավոր են ծանուցել միմյանց ոչ պակաս, քան Ապահովագրության պայմանագրի վաղաժամկետ լուծման ենթադրվող ամսաթվից 15 (տասնհինգ) օր առաջ, եթե Ապահովագրության պայմանագրով այլ բան նախատեսված չէ:
9.4. Ֆիզիկական անձ Ապահովադիրն իրավունք ունի առանց որևէ պատճառաբանության միակողմանիորեն լուծելու Ապահովագրության պայմանագիրը դրա կնքմանը հաջորդող 7 (յոթ) աշխատանքային օրվա ընթացքում (այսուհետ՝ մտածելու ժամանակ):
9.5. Մտածելու ժամանակը չի կիրառվում հետևյալ դեպքերում.
9.5.1. Ապահովագրության պայմանագրի գործողության ժամկետը և/կամ Ապահովագրության պայմանագրով նախատեսված ապահովագրության գործողության ժամկետը չի գերազանցում 1 (մեկ) ամիսը,
9.5.2. Ապահովագրության պայմանագրի կնքմանը հաջորդող 7 (յոթ) աշխատանքային օրվա ընթացքում Ապահովադիրը (Շահառուն) դիմել է ապահովագրական հատուցում ստանալու պահանջով:
9.6. Ապահովագրության պայմանագիրը սույն Պայմանների 9.4. կետի համաձայն լուծելու դեպքում Ապահովագրության պայմանագիրը համարվում է լուծված ֆիզիկական անձ Ապահովադրի կողմից Ապահովագրության պայմանագիրը լուծելու մասին Ապահովագրողին ծանուցելու օրվան հաջորդող օրվանից:
9.7. Սույն Պայմանների 9.2. կետի 9.2.2. ենթակետով և 9.4. կետով սահմանված պայմաններով Ապահովագրության պայմանագիրը տվյալ ապահովագրության օբյեկտի գծով լուծելու դեպքում վերադարձման ենթակա ապահովագրավճարից նվազեցվում են ապահովագրված օբյեկտի գծով Ապահովագրողի պարտականությունների կատարման հետ կապված ծախսերը 20 (քսան) տոկոսի չափով և ապահովագրական հատուցումների գումարները՝ համաձայն հետևյալ բանաձևի, եթե Ապահովագրության պայմանագրով այլ բան նախատեսված չէ.

ՎԱ = ԸԱ*ՉԺ/ԳԺ – ԸԱ*0.2

ՎԱ՝ վերադարձման ենթակա ապահովագրավճար,
ԸԱ՝ ընդամենը ապահովագրավճար՝ համաձայն Ապահովագրության պայմանագրի,
ՉԺ՝ Ապահովագրության պայմանագրի գործողության չլրացած ժամկետ,
ԳԺ՝ Ապահովագրության պայմանագրի գործողության ժամկետ:

Սույն Պայմանների 9.2. կետի 9.2.2. ենթակետով սահմանված պայմաններով տվյալ ապահովագրության օբյեկտի գծով Ապահովագրության պայմանագիրը լուծելու դեպքում, եթե Ապահովագրության պայմանագրի լուծման կամ վաղաժամկետ դադարեցման պահի դրությամբ Ապահովագրողի կողմից իրականացվել է ապահովագրական հատուցում և/կամ Ապահովագրողն ստացել է ապահովագրական պատահարի նշաններ ունեցող իրադարձությունների գծով ապահովագրական հատուցում վճարելու գծով հայտ, ապահովագրության չլրացած ժամկետի համար Ապահովադրին ապահովագրավճարի վերադարձ չի իրականացվում, եթե Ապահովագրության պայմանագրով այլ բան նախատեսված չէ:

9.8. Ապահովագրության պայմանագիրն ապահովագրության օբյեկտներից մեկի գծով դադարեցնելու և մեկ այլ համարժեք ապահովագրության օբյեկտով փոխարինելու դեպքում ապահովագրության օբյեկտի գծով Ապահովագրողի պարտականությունների կատարման հետ կապված ծախսերը 20 (քսան) տոկոսի չափով և ապահովագրական հատուցումների գումարները վերադարձման ենթակա ապահովագրավճարից կարող են չնվազեցվել:

9.9. Սույն Պայմանների 9.2. կետի 9.2.4. ենթակետով սահմանված պայմաններով Ապահովագրության պայմանագիրը լուծելու դեպքում ապահովագրված օբյեկտի գծով Ապահովագրողի պարտականությունների կատարման հետ կապված ծախսերը վերադարձման ենթակա ապահովագրավճարից չեն նվազեցվում, եթե Ապահովագրության պայմանագրով այլ բան նախատեսված չէ:

9.10. Սույն պայմանների 9.2. կետի 9.2.3. ենթակետով սահմանված պայմաններով Ապահովագրության պայմանագիրը լուծելու դեպքում Ապահովադրի կողմից Ապահովագրողին վճարված ապահովագրավճարը վերադարձման ենթակա չէ, եթե Ապահովագրության պայմանագրով այլ բան նախատեսված չէ:

9.11. Ապահովագրության պամանագրի լուծման կամ վաղաժամկետ դադարելու դեպքում, երբ նման լուծման կամ վաղաժամկետ դադարման հետևանքները նախատեսված չեն սույն Պայմաններով և/կամ Ապահովագրության պայմանագրով և/կամ օրենսդրությամբ, Ապահովադրի կողմից Ապահովագրողին վճարված ապահովագրավճարը վերադարձման ենթակա չէ, եթե Ապահովագրության պայմանագրով այլ բան նախատեսված չէ:

9.12. Այն դեպքում, երբ Ապահովադրին վերադարձման ենթակա գումարի հաշվարկի արդյունքում ստացվում է բացասական թվային գումար, ապա վերադարձման ենթակա գումարը սահմանվում է հավասար զրոյին (ապահովագրավճարի վերադարձ չի իրականացվում):

9.13. Սույն Պայմանների 9.2. կետի 9.2.1. և 9.2.2. ենթակետերով սահմանված պայմաններով Ապահովագրության պայմանագիրը լուծելու դեպքում Ապահովադրի և Ապահովագրողի փոխադարձ համաձայնությամբ կարող են սահմանվել Ապահովագրության պայմանագրի դադարեցման գծով վերադարձվող ապահովագրավճարի հաշվարկի այլ սկզբունքներ:
9.14. ՀՀ դրամին համարժեք արտարժույթով կնքված Ապահովագրության պայմանագիրը վաղաժամկետ դադարելու դեպքում Ապահովադրին ապահովագրավճարը վերադարձվում է ՀՀ դրամով, եթե Ապահովագրության պայմանագրով այլ բան նախատեսված չէ՝ Ապահովագրության պայմանագիրը վաղաժամկետ դադարեցնելու մասին Ապահովադրի դիմումի ստացման օրվա դրությամբ ՀՀ կենտրոնական բանկի կողմից տվյալ արտարժույթի համար հրապարակված փոխարժեքով, որը սակայն դուրս չի գալիս Ապահովագրության պայմանագիրը կնքելու օրվա դրությամբ ՀՀ կենտրոնական բանկի կողմից հրապարակված փոխարժեքի 10 (տասը) տոկոս շեղման սահմաններից:

10. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

10.1. Ապահովագրողը պարտավոր է.
10.1.1. ծանոթացնել Ապահովադրին սույն Պայմաններին և Ապահովագրության պայմանագրի պայմաններին,
10.1.2. եթե Ապահովագրության պայմանագրով այլ բան նախատեսված չէ, սույն Պայմանների 11.2. կետում թվարկված բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը Ապահովադրից (Շահառուից) ստանալուց հետո 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում ընդունել և համապատասխան փաստաթղթով ձևակերպել Ապահովադրի (Շահառուի) կողմից հայտնած իրադարձությունը որպես ապահովագրական պատահար ճանաչելու կամ չճանաչելու վերաբերյալ և ապահովագրական հատուցում իրականացնելու կամ ապահովագրական հատուցումը մերժելու վերաբերյալ որոշումը,
10.1.3. հայտնած իրադարձությունը ապահովագրական պատահար ճանաչելու դեպքում համապատասխան որոշումը ընդունելու օրվանից 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում կատարել ապահովագրական հատուցում, իսկ ապահովագրական հատուցումը մերժելու դեպքում 5 (հինգ) օրվա ընթացքում գրավոր ծանուցում ուղարկել Ապահովադրին (Շահառուին) կայացված որոշման մասին, եթե Ապահովագրության պայմանագրով այլ բան նախատեսված չէ,
10.1.4. պահպանել ապահովագրական գաղտնիքը, այսինքն՝ չհրապարակելու մասնագիտական գործունեության արդյունքում Ապահովադրի (Շահառուի) մասին իրեն հայտնի դարձած տեղեկությունները, բացառությամբ ՀՀ գործող օրենսդրությամբ նախատեսված դեպքերի և Ապահովագրության պայմանագրով նախատեսված ռիսկը վերապահովագրությանը փոխանցելու դեպքում այլ ապահովագրական կամ վերապահովագրական ընկերությանը Ապահովագրության պայմանագրի գծով անհրաժեշտ ծավալի տեղեկությունների տրամադրման դեպքի:
10.2.Ապահովագրողն իրավունք ունի.
10.2.1. ստուգել Ապահովադրի (Վարկառուի) և/կամ Շահառուի կողմից հայտնած տեղեկատվությունների արժանահավատությունը ՀՀ օրենսդրությանը չհակասող ցանկացած

իրեն հասանելի միջոցներով,

10.2.2. Ապահովագրության պայմանագրով և սույն Պայմաններով նախատեսված կարգով հարցում անել լրացուցիչ տեղեկությունների համար,

10.2.3. պահանջել անհրաժեշտ փաստաթղթաբանությունը Վարկային պայմանագրով պարտավորությունների չկատարմանը/ոչ պատշաճ կատարմանը հանգեցրած և Ապահովադրի կողմից հայտնած իրադարձության մասով, ինչպես նաև իրականացնել այդ փաստաթղթաբանության ստուգում,

10.2.4. անհրաժեշտության դեպքում ապահովագրական պատահարի հետ կապված տեղեկությունների համար հարցում անել իրավապահ մարմիններ, բանկեր, այլ կազմակերպություններ, հաստատություններ և ձեռնարկություններ, որոնք ունեն հայտնած իրադարձության վերաբերյալ տեղեկատվություն, ինչպես նաև ինքնուրույն պարզել իրադարձության առաջացման պատճառներն ու հանգամանքները,

10.2.5. ստուգել Ապահովագրության պայմանագրի և սույն Պայմանների կատարումն Ապահովադրի կողմից,

10.2.6. ստուգել Հիփոթեքի առարկայի վիճակն ու արժեքը, ինչպես նաև Ապահովադրի (Վարկառուի) և/կամ Շահառուի կողմից իրեն հայտնած տեղեկությունների ճշտությունը ՀՀ օրենսդրությանը չհակասող ցանկացած իրեն հասանելի միջոցներով,

10.2.7. պահանջել փոփոխել Ապահովագրության պայմանագրի պայմանները և/կամ վճարելու ռիսկի մեծանալուն համաչափ լրացուցիչ ապահովագրավճար՝ ՀՀ օրենսդրության համաձայն,

10.2.8. Ապահովադրի համաձայնությամբ տեղեկացնել Շահառուին Ապահովագրության պայմանագրի պայմանների փոփոխության և/կամ Ապահովագրության պայմանագրի վաղաժամկետ դադարեցման մտադրության մասին,

10.2.9. որոշում կայացնել ապահովագրական հատուցման դիմումի դիտարկման ժամկետի ավելացման վերաբերյալ.

10.2.9.1. ապահովագրական հատուցում ստանալու համար վեճերի առաջացման դեպքում՝ մինչև անհրաժեշտ ապացույցների տրամադրման պահը,

10.2.9.2. եթե իրավապահ մարմինները քրեական գործ են հարուցել Ապահովադրի (Վարկառուի, Շահառուի, նրանց աշխատակիցների) կամ նրա լիազորված անձանց նկատմամբ և քննում են հայտնած իրադարձության առաջացմանը հանգեցրած հանգամանքները՝ մինչև այդ գործով դատարանի որոշման ուժի մեջ մտնելու կամ քրեական գործի դադարեցման պահը,

10.2.10. Շահառուի կողմից Հիփոթեքի առարկան ի սեփականություն ընդունելու որոշում ընդունելու դեպքում մինչև ի սեփականություն ընդունելու պահը ձեռք բերել Հիփոթեքի առարկան այն գնով, որով այն Շահառուի կողմից ընդունվելու էր ի սեփականություն,

10.2.11. գույքի իրացման գործընթացում մասնակցել անկախ գնահատողի ընտրությանը, Շահառուի կողմից անկախ փորձագետի կողմից իրականացված գույքի գնահատման արդյունքների վերաբերյալ ծանուցում ստանալու պահից 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում վիճարկել դրանք,

10.2.12. մասնակցել Հիփոթեքի առարկայի իրացման նպատակով իրականացվող հրապարակային սակարկություններին և սակարկություններում հաղթելու դեպքում ձեռք բերել Հիփոթեքի առարկան ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով,

10.2.13. իրականացնել Ապահովագրության պայմանագիրը կնքելիս Ապահովադրի կողմից հայտնած անձնական տվյալների (ՀՀ օրենսդրության համաձայն) մշակում (ներառյալ դրանց տարածումը, օգտագործումը, պահպանումը, ինչպես նաև երրորդ անձանց տրամադրումը) ապահովագրական գործունեություն իրականացնելու, ապահովագրական պրոդուկտների կամ գործընկերների պրոդուկտների մասին տեղեկություններ տրամադրելու նպատակով, այդ թվում՝ կապի միջոցների օգտագործմամբ Ապահովադրի հետ ուղղակի կապ հաստատելու միջոցով, օրենսդրությամբ չարգելված այլ նպատակներով, եթե Ապահովագրության պայմանագրով այլ բան նախատեսված չէ,
10.2.14. սույն Պայմանների 4-րդ բաժնում նախատեսված դեպքերում մերժել ապահովագրական հատուցումը,
10.2.15. մերժել ապահովագրական հատուցման վերաբերյալ համաձայնագրի ստորագրումը Հիփոթեքի առարկան գրավատուի (Վարկառուի) կողմից ներկայացված գնորդին վաճառելու միջոցով Հիփոթեքի առարկայի իրացման դեպքում,
10.2.16. մերժել ապահովագրական հատուցման վճարումը, եթե Ապահովադիրը (Շահառուն) չի կատարել Պայմանագրով և/կամ Պայմաններով նախատեսված իր պարտականությունները,
10.2.17. մերժել ապահովագրական հատուցման վճարումը, եթե Ապահովադիրը (Վարկառուն) և/կամ Շահառուն Ապահովագրողին դեպքի վերաբերյալ հայտնել է անարժանահավատ տեղեկություններ և/կամ պատճառված վնասի չափը դիտավորյալ ուռճացրել է և/կամ դեպքը որպես ապահովագրական պատահարի նշաններ ունեցող իրադարձություն ներկայացնելու նպատակով կատարվել է կեղծ հայտարարություն:
10.3. Ապահովադիրը պարտավոր է.
10.3.1. վճարել ապահովագրավճարը Ապահովագրության պայմանագրում սահմանված չափերով ու կարգով,
10.3.2. տեղեկացնել Շահառուին Ապահովագրության պայմանագրի պայմանների փոփոխության և/կամ վաղաժամկետ դադարեցման մտադրության մասին,
10.3.3. գրավոր տեղեկացնել Շահառուին սույն Պայմաններով և/կամ Ապահովագրության պայմանագրով Շահառուի պարտավորությունների մասին, եթե Ապահովագրության պայմանագրով այլ բան նախատեսված չէ: Հակառակ դեպքում, Պայմաններով և/կամ Ապահովագրության պայմանագրով Շահառուի պարտավորությունների չկատարման բացասական հետևանքները կրում է Ապահովադիրը:
10.4. Ապահովադիրը/Վարկառուն պարտավոր է.
10.4.1. Ապահովագրության պայմանագիրը կնքելիս Ապահովագրողին տեղեկացնել ապահովագրական պատահարի տեղի ունենալու հավանականության և դրա տեղի ունենալու արդյունքում հնարավոր վնասի (ապահովագրական ռիսկի) չափը որոշելու համար էական նշանակություն ունեցող իրեն հայտնի հանգամանքները Պայմանների 8.2. կետի համաձայն,
10.4.2. ձեռնարկել բոլոր հնարավոր և անհրաժեշտ միջոցները կանխելու ապահովագրական պատահարի նշաններ ունեցող իրադարձության տեղի ունենալը,
10.4.3. ձեռնարկել բոլոր միջոցները, որոնք անհրաժեշտ են Վարկային պայմանագրով պարտավորությունները կատարելու համար,
10.4.4. ձեռնարկել բոլոր անհրաժեշտ միջոցները Հիփոթեքի առարկայի պահպանության համար,

10.4.5. տեղեկացնել Ապահովագրողին ապահովագրության նմանատիպ պայմանագրերի առկայության մասին, որոնք կնքվել են այլ ապահովագրական կազմակերպությունների (ապահովագրողների) հետ նույն գույքի և/կամ նույն ռիսկերի կապակցությամբ,
10.4.6. Վարկային պայմանագրի դադարեցման դեպքում անհապաղ տեղեկացնել Ապահովագրողին,
10.4.7. Ապահովադրի կողմից Ապահովագրողի հետ համաձայնեցված ժամկետում վերացնել ռիսկի աստիճանը նկատելիորեն մեծացնող հանգամանքները, որոնց վերացման անհրաժեշտությունը նշել էր Ապահովագրողը Ապահովադրին (Վարկառուին, Շահառուին) գրավոր ծանուցում ուղարկելու միջոցով,
10.4.8. անհապաղ, սակայն ամեն դեպքում իրեն հայտնի դառնալուց հետո 2 (երկու) աշխատանքային օրվա ընթացքում, գրավոր տեղեկացնել Ապահովագրողին Ապահովագրության պայմանագրի կնքման ժամանակ տրամադրված տեղեկությունների փոփոխության վերաբերյալ, եթե այդ փոփոխությունները կարող են էապես ազդել ապահովագրական ռիսկի աստիճանի մեծացման վրա:
10.5. Ապահովադիրը/Շահառուն պարտավոր է.
10.5.1. Ապահովագրության պայմանագրով նախատեսված ապահովագրական պատահարի նշաններ ունեցող իրադարձության տեղի ունենալու դեպքում.
10.5.1.1. գրավոր տրամադրել Ապահովագրողին ողջ տեղեկատվությունը, որը հնարավորություն է տալիս դատելու ապահովագրական պատահարի չափի, պատճառների, ընթացքի և հետևանքների մասին՝ նշելով իրադարձության հանգամանքները, իրադարձության մեջ ներգրավված անձանց և հնարավոր պահանջների պատճառները, ինչպես նաև տրամադրել իրավասու մարմինների փաստաթղթերը, որոնք հավաստում են ապահովագրական պատահարի տեղի ունենալու փաստը և պատճառները,
10.5.1.2. համագործակցել Ապահովագրողի հետ նրա կողմից հետաքննություն անցկացնելու ժամանակ՝ ներառյալ (բայց դրանով չսահմանափակելով) տրամադրել անհրաժեշտ ողջ տեղեկատվությունը, ինչպես նաև ապահովել իրադարձության մասին ցանկացած լրացուցիչ տեղեկատվություն ստանալու պայմաններ,
10.5.1.3. Ապահովագրողի պահանջով տրամադրել ազատ հասանելիություն այնպիսի փաստաթղթերին, որոնք, ըստ Ապահովագրողի կարծիքի, նշանակություն ունեն վնասի հանգամանքների, բնույթի և չափի որոշման համար:
10.6. Շահառուն պարտավոր է.
10.6.1. Ապահովագրողին տրամադրել Հիփոթեքի առարկայի Վարկառուին ուղարկված բռնագանձման ծանուցման օրինակը այդ ծանուցումն ուղարկելու պահից 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում,
10.6.2. ծանուցել Ապահովագրողին Հիփոթեքի առարկան ի սեփականություն ընդունելու որոշման վերաբերյալ ի սեփականություն ընդունելու պահից 10 (տասն) աշխատանքային օր առաջ,
10.6.3. ծանուցել Ապահովագրողին Հիփոթեքի առարկան իրացնելու նպատակով անկախ փորձագետի կողմից իրականացված գույքի գնահատման արդյունքների վերաբերյալ գույքի գնահատման իրականացման պահից 3 (երեք) աշխատանքային օրվա ընթացքում,

բացառությամբ ՀՀ օրենսդրությամբ նախատեսված դեպքերի, երբ իրացումն իրականացվում է ոչ Շահառուի կողմից:
10.6.4. ծանուցել Ապահովագրողին Հիփոթեքի առարկայի իրացման նպատակով նախատեսվող հրապարակային սակարկությունների ամսաթվի վերաբերյալ այդ ամսաթվից առնվազն 10 (տասն) աշխատանքային օր առաջ,
10.6.5. ծանուցել Ապահովագրողին Հիփոթեքի առարկան իրացնելու վերաբերյալ իրացնելու պահից 7 (յոթ) աշխատանքային օրվա ընթացքում:
10.7. Ապահովադիրն իրավունք ունի.
10.7.1. ստուգել Ապահովագրողի կողմից Ապահովագրության պայմանագրի պահանջներին և պայմաններին հետևելը,
10.7.2. ստանալ Ապահովագրողից նրա ֆինանսական կայունությանը վերաբերող և առևտրային գաղտնիք չհանդիսացող տեղեկատվություն,
10.7.3. Ապահովագրության պայմանագրի գործողության ժամկետի ընթացքում այն կորցնելու դեպքում գրավոր դիմում ներկայացնելուց հետո Ապահովագրողից ստանալ կրկնօրինակը: Կրկնօրինակը տրամադրելուց հետո կորցրած Ապահովագրության պայմանագիրը համարվում է անվավեր,
10.7.4. դիմել Ապահովագրողին Ապահովագրության պայմանագրի պայմանների փոփոխման առաջարկով,
10.7.5. Պայմանների 9-րդ բաժնով նախատեսված կարգով հրաժարվել Ապահովագրության պայմանագրից,
10.7.6. պահանջել Ապահովագրողից Պայմանների վերաբերյալ տեղեկությունների տրամադրում:
10.8. Ապահովադիրը (Շահառուն) և Ապահովագրողը պարտավոր են հետևել միմյանց ուղարկվող ծանուցումների նկատմամբ կիրառվող հետևյալ պահանջներին.
10.8.1. Ապահովագրության պայմանագրի համաձայն ուղարկվող ցանկացած ծանուցում պետք է կազմված լինի գրավոր և առաքվի անձամբ կամ նախապես վճարված փոստային (հանձնման ծանուցագրով) կամ սուրհանդակային ծառայության միջոցով կամ էլեկտրոնային նամակով,
10.8.2. էլեկտրոնային նամակով ուղարկված ծանուցումը համարվում է ստացված ուղարկման օրը, սուհանդակի կամ փոստի միջոցով ուղարկման դեպքում՝ հանձնման մասին ծանուցագրի ստացման օրը,
10.8.3. բոլոր ծանուցումները և տեղեկացումներն ուղարկվում են Ապահովագրության պայմանագրում նշված հասցեներին: Կողմերի հասցեների և/կամ վավերապայմանների փոփոխման դեպքում կողմերը պարտավոր են նախապես տեղեկացնել միմյանց այդ մասին: Եթե կողմերից մեկը նախապես տեղեկացված չի եղել մյուս կողմի հասցեի և/կամ վավերապայմանների փոփոխման մասին, ապա նախկին հասցեով ուղարկված բոլոր ծանուցումները և տեղեկացումները համարվում են ստացված նախկին հասցեով ստանալու ամսաթվից սկսած,
10.8.4. պայմանագրային իրավահարաբերությունների կնքման, կատարման կամ դադարեցման հետ կապված ցանկացած ծանուցում և տեղեկացում համարվում է ուղարկված ստացողի հասցեին, միայն եթե այն ձևակերպված է գրավոր տեսքով:
10.9. Սույն Պայմանների հիման վրա Ապահովագրողի հետ Ապահովագրության պայմանագիր

կնքած Ապահովադիրը հաստատում է իր համաձայնությունը՝ կապված Ապահովագրողի կողմից ստորև թվարկված Ապահովադրի անձնական տվյալների ՀՀ օրենսդրությամբ նախատեսված կարգով մշակման հետ՝ Ապահովագրության պայմանագրի գծով ապահովագրություն իրականացնելու համար, այդ թվում՝ պայմանագրի գծով ապահովագրական ծառայությունների տրամադրման, վնասների կարգավորման, պայմանագրի վարման որակը ստուգելու նպատակով, ինչպես նաև Ապահովադրին՝ Ապահովագրողի այլ պրոդուկտների և ծառայությունների վերաբերյալ տեղեկացնելու նպատակով:
Ապահովադրի անձնական տվյալները ներառում են. անունը, ազգանունը, հայրանունը, ծննդյան տարեթիվը, ամիսը, ամսաթիվը և վայրը, անձնագրային տվյալները, բնակության հասցեն, Ապահովագրողի հետ կնքած Ապահովագրության պայմանագրում նշված այլ տեղեկություններ (ներառյալ դրա անբաժանելի մասերը՝ ապահովագրության դիմում, հավելվածներ և այլն), որոնք ՀՀ օրենսդրության համաձայն կարող են դասվել անձնական տվյալներին:
Պայմանների սույն կետի վերը նշված դրույթները վերաբերում են նաև Վարկառուին/Շահառուին՝ նրանց կողմից անձնական տվյալների մշակման համար Ապահովագրողին գրավոր համաձայնություն տալու դեպքում:
10.10. Ապահովագրության պայմանագրով կարող են նախատեսվել նաև ՀՀ օրենսդրությանը չհակասող այլ իրավունքներ և պարտավորություններ:

11. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՀԱՏՈՒՑՄԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ

11.1. Ապահովագրական հատուցումը որոշվում և վճարվում է սույն Պայմանների և Ապահովագրության պայմանագրի դրույթներով նախատեսված չափով և կարգով:
11.2. Ապահովագրական հատուցման վճարման հնարավորության և դրա չափի վերաբերյալ որոշում կայացնելու համար Ապահովադիրը (Շահառուն) տրամադրում է Ապահովագրողին փաստաթղթերի փաթեթ, որը ներառում է.
11.2.1. ապահովագրական հատուցում ստանալու գրավոր դիմում,
11.2.2. Ապահովագրության պայմանագրի պատճենը,
11.2.3. Շահառուի գրավոր պահանջների պատճենը Հիփոթեքի առարկայի իրացումը Շահառուի կողմից իրականացնելու կողմից, որոնք, այդ թվում՝ պարունակում են նաև հետևյալ տեղեկությունները.
- իրացված Հիփոթեքի առարկայի արժեքի հաշվին Վարկային պայմանագրով չմարված պարտավորության ինքնակամ մարման պահանջ,
- վարկը մարելու պահանջ այն դեպքում, երբ Հիփոթեքի առարկայի իրացման միջոցով ստացված և Վարկային պայմանագրով նախատեսված կարգով բաշխված դրամական միջոցները բավարար չեն հիփոթեքով ապահովված պահանջների բավարարման համար,
- վարկի վերադարձման կապակցությամբ պարտավորությունների չկատարման/ոչ պատշաճ կատարման համար Վարկառուից բռնագանձման ենթակա գումարների չափերը, այդ թվում՝ Մայր գումարի մնացորդի չափը, դրամական միջոցների օգտագործման համար հաշվեգրված տոկոսների չափը, տույժերի, տուգանքների և ծախսերի չափը և Ապահովագրության

պայմանագրով նախատեսված՝ Ապահովագրողի պահանջով այլ գումարներ,
- Հիփոթեքի առարկայի սկզբնական վաճառքի արժեքը դրա իրացման դեպքում,
- գինը, որով Շահառուն (վարկատուն) ձեռք է բերում (ի սեփականության է վերցնում) Հիփոթեքի առարկան,
11.2.4. Հիփոթեքի առարկայի նկատմամբ բռնագանձման տարածման վերաբերյալ Շահառուի հայցային դիմումի պատճենը, գործի նյութեր և դատարանի ուժի մեջ մտած որոշում, Հիփոթեքի առարկայի իրացումը ոչ Շահառուի կողմից իրականացնելու դեպքում,
11.2.5. Ապահովագրողի, Վարկառուի և Շահառուի միջև համաձայնություն ապահովագրական հատուցման վերաբերյալ Հիփոթեքի առարկան գրավատուի (Վարկառուի) կողմից ներկայացված գնորդին վաճառելու միջոցով Հիփոթեքի առարկայի իրացման դեպքում,
11.2.6. փաստաթղթեր (դրանց պատճեններ), որոնք հավաստում են Հիփոթեքի առարկայի չկայացած վաճառքի փաստը և սահմանում այն արժեքը, որով Շահառուն (վարկատուն) ձեռք է բերում (իրեն է վերցնում) Հիփոթեքի առարկան,
11.2.7. փաստաթղթեր, որոնք հավաստում են Մայր գումարի մնացորդը, ինչպես նաև Ապահովագրողին դիմելու օրվա դրությամբ Վարկային պայմանագրով հաշվեգրված, սակայն չվճարված տոկոսները, հաշվեգրված, սակայն չվճարված տույժերը, տուգանքները,
11.2.8. անհրաժեշտության դեպքում փաստաթղթեր, որոնք հավաստում են Հիփոթեքի առարկայի իրացումից Շահառուի ստացված և հիփոթեքի մասին օրենսդրությամբ նախատեսված կարգով բաշխված դրամական միջոցներ, այլ տեղեկանքներ, հաշիվներ և այլն,
11.2.9. անհրաժեշտության դեպքում փաստաթղթեր (դրանց պատճեններ), որոնք հավաստում են Շահառուի վնասների առաջացման կանխարգելման և/կամ դրանց կրճատման համար անհրաժեշտ միջոցների ձեռնարկումը (այդ թվում փաստաթղթեր, որոնք հավաստում են Շահառուի կողմից Վարկային պայմանագրի վերակազմավորման գործընթացն անցկացնելը),
11.2.10. այլ փաստաթղթեր, որոնք հավաստում են ապահովագրական պատահարի տեղի ունենալու փաստը, պատճառները, Շահառուին պատճառված վնասները, որոնք գրավոր տեսքով պահանջել է Ապահովագրողը:
11.3. Եթե Ապահովագրության պայմանագրով այլ բան նախատեսված չէ, ապահովագրական հատուցումը որոշվում է որպես Մայր գումարի մնացորդի փաստացի չափի մաս, որը որոշվում է Ապահովագրության պայմանագրի պայմաններով և հաշվարկվում՝ հաշվի առնելով Հիփոթեքի առարկայի իրացումից Շահառուի ստացած գումարը,
11.4. Ցանկացած դեպքում ապահովագրական հատուցման գումարը չի կարող գերազանցել Ապահովագրության պայմանագրով սահմանված ընդհանուր ապահովագրական գումարի չափը:
11.5. ՀՀ դրամին համարժեք արտարժույթով ապահովագրության դեպքում ապահովագրական հատուցումն իրականացվում է ՀՀ դրամով, եթե Ապահովագրության պայմանագրով այլ բան նախատեսված չէ՝ ապահովագրական պատահար տեղի ունենալու օրվա դրությամբ ՀՀ կենտրոնական բանկի կողմից հրապարակված փոխարժեքով, սակայն Ապահովագրության պայմանագիրը կնքելու օրվա դրությամբ ՀՀ կենտրոնական բանկի կողմից հրապարակված փոխարժեքի 10 (տասը) տոկոս շեղման սահմաններում:
11.6. Ապահովագրական հատուցումը կատարվում է՝ Շահառուի հաշվարկային հաշվին ՀՀ դրամով դրամական միջոցները անկանխիկ փոխանցելով:

11.7. Եթե ապահովագրական պատահար տեղի ունենալու ամսաթվի դրությամբ Վարկառուի նկատմամբ միևնույն ռիսկերի կապակցությամբ գործել են նաև ապահովագրության այլ պայմանագրեր, ապա ապահովագրական հատուցումը սահմանվում է Ապահովագրողի հետ կնքված Ապահովագրության պայմանագրի գծով ապահովագրական գումարի և Վարկառուի գծով կնքված բոլոր պայմանագրերի գծով ընդհանուր ապահովագրական գումարի հարաբերությանը համամասնորեն: Ապահովագրողն իրականացնում է ապահովագրական հատուցում միայն իրեն հասնող բաժնի մասով ըստ միասնական պատասխանատվության:
11.8. Ֆիզիկական անձ Ապահովադիրն իրավունք չունի պահանջել ապահովագրական հատուցում մտածելու ժամանակի ընթացքում տեղի ունեցած ապահովագրական պատահարի համար, եթե այդ մասին նա չի ծանուցել Ապահովագրողին և եթե այդ պատահարը տեղի ունենալուց հետո ֆիզիկական անձ Ապահովադիրը, մինչև մտածելու ժամանակի ավարտը, ծանուցել է Ապահովագրողին Ապահովագրության պայմանագիրը լուծելու մասին:

12. ՎԵՃԵՐԻ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԿԱՐԳԸ

12.1. Սույն Պայմանների համաձայն կնքված Ապահովագրության պայմանագրից բխող վեճերը կարգավորվում են բանակցությունների միջոցով:
12.2. Բանակցությունների արդյունքում համաձայնության չգալու դեպքում ֆիզիկական անձ Ապահովադիրների/Շահառուների պահանջների հետ կապված վեճերը լուծվում են Ֆինանսական համակարգի հաշտարարի կողմից ՝ «Ֆինանսական համակարգի հաշտարարի մասին» ՀՀ օրենքի համաձայն կամ դատական կարգով՝ ՀՀ օրենսդրության համաձայն, իսկ իրավաբանական անձ Ապահովադիրների/Շահառուների պահանջների հետ կապված՝ դատական կարգով՝ ՀՀ օրենսդրության համաձայն:
12.3. Վիճելի հարցեր լուծելու դեպքում Ապահովագրության պայմանագրի դրույթները գերակայող ուժ ունեն սույն Պայմանների և Ծրագրի նկատմամբ:
12.4. Վիճելի հարցեր լուծելու դեպքում Ծրագրի դրույթները գերակայող ուժ ունեն սույն Պայմանների նկատմամբ:
12.5. Վիճելի հարցեր լուծելու դեպքում, եթե սույն Պայմաններով Ծրագրի դրույթների վերաբերյալ նախատեսված է առավել մանրամասն նկարագրություն, ապա կիրառվում են սույն Պայմանների և Ծրագրի դրույթները միաժամանակ:

13. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ ՄԱԺՈՐ)

13.1. Կողմերից ոչ մեկը պատասխանատվություն չի կրում Ապահովագրության պայմանագրից բխող պարտականություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար, եթե դա հանդիսացել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանք, մասնավորապես՝ ջրհեղեղի, հրդեհի, երկրաշարժի և այլ տարերային աղետների, ռազմական գործողությունների, քաղաքացիական պատերազմի, ցանկացած տիպի ժողովրդական հուզումների, գործադուլների, տնտեսական շրջափակման, ինչպես նաև այլ կառավարության կողմից սահմանված սահմանափակումների և արգելքների:

13.2. Այն դեպքում, երբ սույն Պայմանների 13.1 կետում նշված հանգամանքներից մեկն անմիջականորեն ազդել է պարտականությունը Ապահովագրության պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու վրա, դրա կատարումը հետաձգվում է այդ հանգամանքների ազդեցության ժամկետով: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 30 (երեսուն) օրից ավելի, կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի ամբողջությամբ կամ մասնակիորեն լուծել Ապահովագրության պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին, և այդ դեպքում կողմերից ոչ մեկը պատասխանատվություն չի կրում հնարավոր վնասների փոխհատուցման համար:
13.3. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը Ապահովագրությանոպայմանագրից բխող պարտականությունների կատարման վրա պարտավոր է ապացուցել այն կողմը, որի պարտականությունների կատարմանը խոչընդոտում է նման ազդեցությունը: